

19 Հոկտեմբեր

Ս. Երուսաղեմի վանուց մեկ նոր կանոնագիրը կիրատարակեն ազգային լրագիրները:

Այս կանոնը Վսեմ. Ստեփան բաշա Ասլանեան խմբագրած էր՝ երբ յիշեալ վանքին հաշիւները քննելու համար քննիչ ղրկուած էր Երուսաղեմ:

Նորին վսեմութիւնը երկու հարիւր ոսկի առաւ ի վարձատրութիւն իւր ըրած քննութեան, որուն արդիւնքը դեռ ոչ ոք գիտէ:

Ահա վանք մը, որ երեսուն հազար ոսկւոյ պարտք կդիզէ, եւ մենք իրեն կանոն կշինենք, առանց հարցնելու, թէ ի՛նչպէս գոյացաւ այդ պարտքը, Երուսաղեմի պատրիարքն է պատասխանատուն թէ միաբանութիւնը. ի՛նչ երաշխաւորութիւն կայ, որ ուրիշ անգամ վերստին պարտական չպիտի մնայ այդ վանքը. կանոնի չգոյութեա՞ն պատճառաւ գոյացաւ այդ *հարստահարիչ* պարտքը. ո՞վ էր պատճառ միաբանական ուխտին կանոն չունենալուն: Առանց այս հարցումներուն գոհացուցիչ պատասխաններն առնելու՝ խեղճ ժողովրդեան դիմել եւ ստակ ուզելն ուրիշ բան չնշանակեր, եթէ ոչ հաստատել սա ճշմարտութիւնը, թէ կրօնաւորները վանքերու մէջ պիտի նստին, պիտի ուտեն, պիտի խմեն, պիտի պառկին, եւ ժողովուրդն ալ անոնց ծախքը պիտի հոգայ վասն երկնային փառաց:

20 Հոկտեմբեր

Անգղիական լրագիրները կձանուցանեն, որ Տուլչինիօյի յանձնումէն ետքը եթէ Անգղիա առանձին մնայ՝ աւելի առաջ չպիտի երթայ:

–Ե՞տ պիտի երթայ:

–Աս ալ չենք յուսար:

Անգղիական լրագիրներուն այս գուշակութիւններն տխուր ազդեցութիւն մը ունեցան անոնց վրայ, որք իրենց յոյսը միայն Անգղիոյ վրայ դրած էին: Եւ արդարեւ, Անգղիոյ ազատական կուսակցութիւնը շատ նպաստաւոր կերպով խօսեցաւ Հայկական խնդրոյն համար, նոյն իսկ թագուհին իւր խօսած ճառին մէջ Հայոց խնդիրն ալ յիշած էր: Սակայն մոռնալու չէ, որ երբ շահը խօսի՝ յիշողութիւնը կտկարանայ եւ մարդս չկրնար իւր ըրած խոստումը յիշելու:

21 Հոկտեմբեր

Միացեալ Ընկերութիւնը Վանայ վարժապետանոցին մէջ բնական գիտութիւններու դասախօսութիւնն ալ աւելցուց: Յիշեալ ընկերութիւնն